ԱՐՁԱՆԱԳՐՈՒԹՅՈՒՆ ԹԻՎ 12

«Շիրակի Մ. Նալբանդյանի անվան պետական համալսարան» հիմնադրամի ռեկտորատի 28.02.2019թ. նիստի

Ռեկտորատի նիստը կայացավ ք. Գյումրի, Պ. Սևակ 4 հասցեում:

Նիստին ներկա էին ռեկտորատի 15 (տասնհինգ) անդամից 14-ը (տասնչորսը):

Նիստին մասնակցում էին՝

1. Ե. Սերոբյան՝ ռեկտորի ԺՊ
2. Ս. Շահպարոնյան՝ ռեկտորի խորհրդական,
3. Կ. Պետրոսյան՝ ռեկտորատի քարտուղար, գիտական քարտուղար,
4. Վ. Խաչատրյան՝ արհեստակցական կազմակերպության նախագահ,
5. Հ. Մելքոնյան՝ արտաքին համագործակցության և հասարակայնության հետ կապերի կենտրոնի տնօրեն
6. Ռ. Քալաջյան՝ ֆինանսատնտեսական վերլուծությունների, ծրագրավորման և հաշվապահական հաշվառման բաժնի վարիչ-գլխավոր հաշվապահ,
7. Ա. Սարգսյան՝ գիտական քաղաքականության, որակի ապահովման և կառավարման կենտրոնի տնօրեն,
8. Ն. Ավետիսյան՝ ուսումնամեթոդական գործընթացի կառավարման կենտրոնի փոխտնօրեն
9. Մկրտչյան Արթուր՝ ռազմական ամբիոնի պետ,
10. Բ. Պողոսյան՝ բնագիտամաթեմատիկական ֆակուլտետի դեկան
11. Թ. Մելիքյան՝ հումանիտար գիտությունների և արվեստի ֆակուլտետի դեկան,
12. Ռ. Մարդոյան՝ մանկավարժության ֆակուլտետի դեկան
13. Օ. Հովհաննիսյան՝ սոցիալական գիտությունների և իրավունքի ֆակուլտետի դեկան
14. Ա. Հովհաննիսյան՝ անձնակազմի կառավարման և իրավական ապահովման բաժնի պետ

ՕՐԱԿԱՐԳ

1. ՇՊՀ-ի հայցորդների և ասպիրանտների 2018-2019 ուստարվա գարնանային շրջանի դասընթացների կազմակերպման ժամանակացույցի սահմանման մասին

Հաղ.՝ ռեկտորի ԺՊ Ե. Սերոբյան

2. Եվրամիության ERASMUS+ միջազգային կրեդիտային շարժունության ծրագրով Իսպանիայի Վայլադոլիդի համալսարանում ուսումնառած ՇՊՀ հիմնադրամի հումանիտար գիտությունների և արվեստի ֆակուլտետի երկու ուսանողների 2018-2019 ուսումնական տարվա 4-րդ կուրսում 2-րդ կիսամյակի պրակտիկայի ժամկետների մասին

2.1. Հումանիտար գիտությունների և արվեստի ֆակուլտետի ռուսաց լեզու և գրականություն բաժնի հեռակա ուսուցման համակարգի ուսանողուհի Անի Էդվարդի Մանուկյանի 2018-2019 ուսումնական տարվա 5-րդ կուրսում I կիսամյակի պրակտիկայի ժամկետների մասին

Հաղ.՝ ուսումնամեթոդական գործընթացի կառավարման կենտրոնի փոխտնօրեն Ն. Ավետիսյան

3. Ընթացիկ հարցեր

1. ԼՍԵՑԻՆ՝

ՇՊՀ-ի հայցորդների և ասպիրանտների 2018-2019 ուստարվա գարնանային շրջանի դասընթացների կազմակերպման ժամանակացույցի սահմանման մասին

ԱՐՏԱՀԱՅՏՎԵՑԻՆ՝
Ա. Սարգսյանը, Ն. Ավետիսյանը:

ՈՐՈՇԵՑԻՆ՝
ՇՊՀ-ի հայցորդների և ասպիրանտների 2018-2019 ուստարվա գարնանային շրջանի դասընթացների կազմակերպումը ս/թ-ի մարտից տեղափոխել ապրիլ ամսին, իսկ 2018թ.-ի հաշվետվություններն ու ատեստավորումը կազմակերպել մինչև մարտի 30-ը ներառյալ:
ՔՎԵԱՐԿԵՑԻՆ՝

14 անդամ. կողմ՝ 14, դեմ՝ 0, ձեռնպահ՝ 0:

2. ԼՍԵՑԻՆ՝

Եվրամիության ERASMUS+ միջազգային կրեդիտային շարժունության ծրագրով Իսպանիայի Վայլադոլիդի համալսարանում ուսումնառած ՇՊՀ հիմնադրամի հումանիտար գիտությունների և արվեստի ֆակուլտետի երկու ուսանողների 2018-2019 ուսումնական տարվա 4-րդ կուրսում 2-րդ կիսամյակի պրակտիկայի ժամկետների մասին

ԱՐՏԱՀԱՅՏՎԵՑԻՆ՝

Ե. Սերոբյանը, Ռ. Մարդոյանը

ՈՐՈՇԵՑԻՆ՝

ՇՊՀ հիմնադրամի հումանիտար գիտությունների և արվեստի ֆակուլտետի «Անգլերեն լեզու և գրականություն» մասնագիտության առկա ուսուցման անվճար համակարգի ուսանողուհիներ Ալինա Գևորգի Հովիկյանին և Արփինե Արայի Հունանյանին 2018-2019 ուսումնական տարվա 4-րդ կուրսի 2-րդ կիսամյակի պրակտիկայի ժամկետները սահմանել ս/թ-ի մարտի 4-ից մինչև ապրիլի 5-ը:

ՔՎԵԱՐԿԵՑԻՆ՝

14 անդամ. կողմ՝ 14, դեմ՝ 0, ձեռնպահ՝ 0:

2.1. ԼՍԵՑԻՆ՝

Հումանիտար գիտությունների և արվեստի ֆակուլտետի ռուսաց լեզու և գրականություն բաժնի հեռակա ուսուցման համակարգի ուսանողուհի Անի Էդվարդի Մանուկյանի 2018-2019 ուսումնական տարվա 5-րդ կուրսում I կիսամյակի պրակտիկայի ժամկետների մասին

Տիկին Ավետիսյանը ներկայացրեց, որ ռուսաց լեզու և գրականություն բաժնի հեռակա ուսուցման համակարգի ուսանողուհի Անի Էդվարդի Մանուկյանը 08.02.18-08.02.19թթ.-ին տարկետման մեջ է գտնվել, (09.04.2018թ.-ի N 144 հրամանի համաձայն), սույն թվականի 08.02-ից, 2018-2019թթ. վերականգնվել է և ուսումնական տարվա 5-րդ կուրսում I կիսամյակի պրակտիկային մասնակցելու համար ժամկետներ պետք է սահմանվեն:

ՈՐՈՇԵՑԻՆ՝

Հումանիտար գիտությունների և արվեստի ֆակուլտետի ռուսաց լեզու և գրականություն բաժնի հեռակա ուսուցման համակարգի ուսանողուհի Անի Էդվարդի Մանուկյանի 2018-2019 ուսումնական տարվա 5-րդ կուրսում I կիսամյակի պրակտիկայի ժամկետներ սահմանել սույն թվականի 04.03-05.04-ը:

ՔՎԵԱՐԿԵՑԻՆ՝

14 անդամ. կողմ՝ 14, դեմ՝ 0, ձեռնպահ՝ 0:

Ռեկտորատի նախագահ՝ ռեկտորի ԺՊ	Ե. Սերոբյան
Ռեկտորատի քարտուղար, գիտական քարտուղար՝	Կ. Պետրոսյան
Ռեկտորի խորհրդական՝	Ս. Շահպարոնյան
Ֆինանսատնտեսական վերլուծությունների, ծրագրավորման և հաշվապահական հաշվ. բաժնի վարիչ-գլխավոր հաշվապահ՝	Ռ. Քալաջյան
Արհեստակցական կազմակերպության նախագահ՝	Վ. Խաչատրյան
Գիտական քաղաքականության, որակի ապահովման և կառավարման կենտրոնի տնօրեն՝	Ա. Սարգսյան
Արտաքին համագործակցության և հասարակայնության հետ կապերի կենտրոնի տնօրեն՝	Հ. Մելքոնյան
Գրադարան-ուսումնագիտական խորհրդատվությունների, նորարարությունների և ՏՏ կենտրոնի տնօրեն՝	Թ. Խաչատրյան
Ուսումնամեթոդական գործընթացի կառավարման կենտրոնի փոխտնօրեն	Ն. Ավետիսյան
Բնագիտամաթեմատիկական ֆակուլտետի դեկան՝	Բ. Պողոսյան
Հումանիտար գիտությունների և	

արվեստի ֆակուլտետի դեկան՝	Թ. Մելիքյան
Մանկավարժության ֆակուլտետի դեկան՝	Ռ. Մարդոյան
Սոցիալական գիտությունների և իրավունքի ֆակուլտետի դեկան՝	Օ. Հովհաննիսյան
Ռազմական ամբիոնի պետ՝	Ա. Մկրտչյան
Անձնակազմի կառավարման և իրավական ապահովման բաժնի վարիչ՝	Ա. Հովհաննիսյան